









ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ 18:18 15/03/2018 ՀԱՅԱՍՏԱՆ

# Տարեկան 2000 օրթեզ է պատրաստվում հենաշարժողական խնդիրներ ունեցող մարդկանց համար

«Օրթեզ» օրթեզավորման կենտրոնում տարեկան մոտ 2000 օրթեզ է պատրաստվում: Լրագրողների հետ զրույցում այս մասին տեղեկացրեց «Օրթեզ» օրթեզավորման կենտրոնի տնօրեն Արա Թեքգյոզյանը: Նա նշեց, որ 4 տարի առաջ Ճապոնիայի կառավարության հետ համատեղ պայմանագիր են ստորագրել օրթեզավորման կենտրոնի տեխնիկական օգնության վերաբերյալ:

«Դրանք հատուկ հաստոցներ են, գործիքներ, որոնց միջոցով պատրաստվում են օրթեզներ: Այդ հատուկ մասնագիտական գործիքները շատ թանկ արժեն, և առանց Ճապոնիայի կառավարության օգնության՝ մեր վճարման համակարգում և տարբեր համակարգերով հնարավոր չէ գնել»,- ասաց նա:

Թեքգյոզյանը նշեց, որ Ճապոնիայի կառավարությունից իրենց մոտավորապես 120 հազար եվրոյի շրջանակներում նյութական օգնություն է տրվել՝ գործիքների ու սարքավորումների տեսքով: Դրանց միջոցով տարեկան մոտ 2000 օրթեզ է պատրաստվում, որոնք առանց այդ սարքավորումների անհնար է պատրաստել:

«2000-ը բազմապատկեք տարիների թվով՝ 4-ով, տեսեք՝ քանի օրթեզ է պատրաստվել հաշմանդամություն ունեցող երեխաների և հենաշարժողական խնդիրներ ունեցող մարդկանց համար, դա հսկայական օգնություն է»,- ասաց նա:






Տեսնել բոլոր լուսանկարները

Share | Հավանել 0 Tweet

Աղբյուրը՝ Panorama.am

Տեքստում սխալ կամ վրիպակ նկատելու դեպքում, ուղարկեք խմբագրին հաղորդագրություն՝ նշելով տվյալ սխալը, այնուհետև սեղմելով Ctrl-Enter:

## ԼՐԱՀՈՍ

14:50
Բացահայտվել են իրացնելու նպատակով իրավունք վերապահող և տարբեր պաշտոնական փաստաթղթեր կեղծելու դեպքեր

14:41
Հրազդանում ջերմոցային տնտեսություն կկառուցվի, Ապարանում՝ մանկապարտեզ, իսկ Փարաքարում՝ SS կենտրոն

14:24
Այսօր Լոքյան Դավիթը որևէ խնդիր չունի. նախարարն իր պաշտոնանկության մասին

14:22
Նախագահը ներկա է գտնվել «ԱրմՀայԹեք-2018» միջազգային ցուցահանդեսի բացմանը

14:20
ՃՈ Կոտայքի բաժանմունքում արդեն 3-րդ անգամ կաշառքով վարորդական իրավունքի վկայական են տրամադրում

14:14
Ռուսաստանը վարկային նոր համաձայնագրով Հայաստանին զենքի մատակարարումը կսկսի այս տարի

14:00
Փորձագետ. «Թուրքիան միջուկային զենք կստեղծի 10-20 տարվա ընթացքում»

13:55
Արցախի ԱՆ-ն հրապարակել է պայթյունի հետևանքով վիրավորների անունները

13:50
Ազնավուրի թույլտվությամբ «Հայր Գորիո»-ի հայերեն թարգմանության շապիկին կադր է նրա մասնակցությամբ ֆիլմից

13:47
Սերժ Սարգսյանը ստորագրել է Ազգային ժողովի ընդունած մի շարք օրենքներ

13:35
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում սկսվել են Ավագ հինգշաբթիի արարողությունները

13:28
Փարաքարում առաջին էկո-պուրակը կբացվի

13:25
«HALO Trust»-ը՝ Ղազանչիում տեղի ունեցած միջադեպի վերաբերյալ

13:04
Երևանի հիմնադրման 2800-ամյակին նվիրված միջոցառումներն այս տարի կանցկացվեն սեպտեմբերի 29-ին և 30-ին

12:53